ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գառնի համայնքում սուբվենցիաների ծրագրերի՝ այդ թվում Գառնի համայնքում ճանապարհների ասֆալտապատման, ճանապարհների լուսավորման, ջրագծերի նորոգման, մշակույթի տան վերանորոգման աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային լսումների (քննարկումների) վերաբերյալ

17 նոյեմբերի 2022թ գ. Գառնի

Գառնիի համայնքապետարանում Գառնի համայնքում սուբվենցիաների ծրագրերի՝ այդ թվում Գառնի համայնքում ճանապարհների ասֆալտապատման, ճանապարհների լուսավորման, ջրագծերի նորոգման, մշակույթի տան վերանորոգման աշխատանքների վերաբերյալ հանրային բաց լսումները տեղի ունեցան նոյեմբերի 17-ին ժամը 16.00-ին Գառնի համայնքապետարանում Ստ. Շահումյան 4, 2-րդ հարկ համայնքի ղեկավարի աշխատասենյակում:

Նախապես հայտարարված հրավերի հիմքով սուբվենցիաների ծրագրերի քննարկմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, ՀՈԱԿ-ների, համայնքում գործող ՊՈԱԿ-ների և այլ կազմակերպությունների աշխատակիցներ, համայնքի մենատնտես գյուղացիներ, ավագանու անդամներ և շահագրգիռ այլ անձիք:

Բաց լսումների բացման խոսքով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը, որը մասնավորապես նշեց , որ 2022 թվականի նոյեմբերի 18-ին կայացող բաց լսումների համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 14-ի № 888 որոշումը, ըստ որի համայնքապետարանի տեղեկատվական կառավարման համակարգում տրվել է հրավերի հայտարարություն: Հրավերի հայտարարությունը փակցվել է նաև համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և մի շարք մարդաշատ վայրերում (հայտարարությունների համար սահմանված վայրերում), նշված հայտարարությամբ համայնքի բնակչությունը (և ոչ միայն համայնքի բնակչությունը) իրազեկված են Գառնի համայնքում սուբվենցիաների ծրագրերի՝ այդ թվում Գառնի համայնքում ճանապարհների ասֆալտապատման, ճանապարհների լուսավորման, ջրագծերի նորոգման, մշակույթի տան վերանորոգման աշխատանքների վերաբերյալ կայանալիք հանրային բաց լսումների մասին: Սուբվենցիոն ծրագրերի մասին տեղեկատվությունը մանրամասնորեն ներկայացրեց Վիրապ Կարապետյանը: Նա ներկայացրեց այդ ծրագրերի կարևորությունը համայնքի զարգացման համար, նաև նշեց բոլոր բնակավայրերի համաչափ զարգացման կարևորությունը : Բոլոր սուբվենցիոն ծրագրերի նախատեսված ծախսերի մասով ելույթ ունեցավ Գառնիի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանը:

Ելույթ ունեցավ « Գառնիի կոմունալ տնտեսություն » ՀՈԱԿ-ի տնօրեն Ներսես Վարդանյանը՝ նա նշեց, որ շատ կարևոր է համայնքի բոլոր բնակավայրերում ջրագծի

բարելավման հարցը, որը թույլ կտա բնակիչներին օգտագործել սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանող ջուր:
Ճանապարհների լուսավորության մասին ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Կ.Գաբրիելյանը, նա կարևորեց բնակիչների անվտանգ տեղաշարժը , հատկապես գիշերային ժամերին:

Համայնքի փողոցների ասֆալտապատման ծրագիրը ներկայացրեց համայնքապետարանի գլխավոր մասնագետ՝ Գարսևան Խաչատրյանը: Նա նշեց,որ համայնքի բնակիչների համար կարևոր է, ունենալ բարեկեցիկ փողոցներ ,
Գառնիի մշակույթի արվեստի սպորտի արտադպրոցական կրթդաստիարարչական կենտրոնի տնօրեն՝ Լիանա Փիլիպոսյանը ելույթ ունեցավ մշակույթի տան վերանորոգման մասով: Նա կարևորեց համայնքի երեխաների մշակութային դաստիարակությունը նաև նշեց, որ համայնքի մշակույթի տունը իր մեջ արտացոլում է համայնքի դեմքը:

Բոլոր ծրագրերի շուրջ ընթացան բուռն քննարկումներ , ելույթ ունեցան համայնքի տարբեր բնակավայրերից բնակիչներ՝ նրանք նույնպես կարևորեցին այդ ծրագրերիր իրականացումը: Բոլոր ծրագրերը արժանացան հավանության, այդ ծրագրերի շուրջ դժգոհություններ չկային:
Բաց լսումները ավարտվեցին ժամը 17 [30]-ին :
Արձանագրությունը վարեց սուբվենցիաների ծրագրերի՝ այդ թվում Գառնի համայնքում ճանապարհների ասֆալտապատման, ճանապարհների լուսավորման, ջրագծերի նորոգման, մշակույթի տան վերանորոգման աշխատանքների վերաբերյալ բաց լսումների քարտուղար՝ Միրանուշ Պռազյանը:

Հաստատեց համայնքի ղեկավար՝ _____ Տիգրան Պողոսյանը